ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

05 ՀՈՒՆԻՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Միեր Ասատրյանը, Գնել Ղազարյանը, Գրիշա Ղազարյանը, Նարինե Սմբատյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հուսիկ Սահակյանը

Նիստը արձանագրում էր ՝ Գևորգ Սիմոնյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՓԱՌԱՏՈՆՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԻ ՏՈՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ.

(Զեկ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ և 42-րդ կետերի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Արենի համայնքի բնակավայրերում (Արենի, Ագարակաձոր, Աղավնաձոր, Արփի, Գնիշիկ, Ելփին, Չիվա, Խաչիկ և Ռինդ) 2025 թվականին կազմակերպվող փառատոնների և գյուղի տոների պատշաճ կազմակերպման և իրականացման համար 2025թվականի տարեկան բյուջեից հատկացնել գումարներ.

1) Արենի բնակավայր՝ մինչև 8 միլիոն ՀՀ դրամ,

2) Ագարակաձոր բնակավայր՝ մինչև 2 միլիոն ՀՀ դրամ,

3) Աղավնաձոր բնակավայր՝ մինչև 5 միլիոն ՀՀ դրամ,

4) Արփի բնակավայր՝ մինչև 2 միլիոն ՀՀ դրամ,

5) Գնիշիկ բնակավայր՝ մինչև 2 միլիոն ՀՀ դրամ,

6) Ելփին բնակավայր՝ մինչև 2 միլիոն ՀՀ դրամ,

7) Խաչիկ բնակավայր՝ մինչև 5 միլիոն ՀՀ դրամ,

8) Չիվա բնակավայր՝ 2 մինչև միլիոն ՀՀ դրամ,

9) Ռինդ բնակավայր՝ մինչև 7 միլիոն ՀՀ դրամ,

Ընդամենը՝ 35 միլիոն ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի ղեկավարին՝

1) Բնակավայրերի թաղամասերը ներկայացնող տաղավարների ձևավորման և անհրաժեշտ այլ ապրանքների գնման նպատակով, թաղամասերի կողմից ներկայացված պատասխանատու անձանց հատկացնել 40 000 ՀՀ դրամ՝ մեկ տաղավարի հաշվով:

2) Համայնքի բնակավայրերը ներկայացնող տաղավարների ձևավորման և անհրաժեշտ այլ պարագաների գնման նպատակով բնակավայրերի վարչական ղեկավարներին և Արենի բնակավայրի պատասխանատուին հատկացնել 40 000 ՀՀ դրամ՝ մեկ տաղավարի հաշվով:

3. Փառատոնների կազմակերպման աշխատանքներին և իրականացվելիք ծախսերին ներգրավել համայնքի կողմից հիմնադրված <<Արփա>> բնապահպանական հիմնադրամին և <<Արենի համայնքային զարգացման>> հիմնադրամին:

4. Փառատոնների ժամանակ համայնքապետարանի կողմից քաղաքացիներին և իրավաբանական անձանց տրամադրվող գույքի (տաղավար, ծալովի աթոռ, ծալովի սեղան) վարձավճար սահմանել մեկ օրվա համար 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ, որը պետք է վճարվի «Արենի համայնքային զարգացման» հիմնադրամի հաշվեհամարին կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 076-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26.06.2024ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 091-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի>> մասին օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Արենի համայնքի ավագանու 26.06.2024թվականի << Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 2,41898հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը վարձակալությամբ <<Կվարցիտ>> ՍՊԸ-ին հատկացնելու մասին>> թիվ 091-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ.

Որոշման տեքստը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ.

1. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 2,41898հա հողամասը (ծածկագիրը՝ 10-025-0106-0053, գործառնական նշանակությունը ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի, հասցեն Արենի, Խաչիկ Կվարցիտի 1-ին թաղամաս 3) մինչև թույլտվության ժամկետի ավարտը, 20 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ <<Կվարցիտ>> ՍՊԸ-ին՝ հաշված 14. հունիսի 2024թվականից: Տարեկան վարձավճարը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 6 000 000 ՀՀ դրամ և յուրաքանչյուր արդյունահանված օգտակար հանածոյի 1 տոննայի հաշվարկով 1000 ՀՀ դրամ:

2. Տարեկան վարձավճարի 6 000 000 ՀՀ դրամ գումարը վճարվում է հավասար պարբերականությամբ՝ ըստ ամիսների: Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը վճարվում է մինչև հաջորդող ամսվա 15-ը:

3. Արդյունահանված օգտակար հանածոների համար վճարումները կատարվում են մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 20-ը ներառյալ՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից ստացված հաշվետվությունների հիման վրա:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 077-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ 2025ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՑ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Արենի համայնքի բնակավայրերում (Արենի, Ագարակաձոր, Աղավնաձոր, Արփի, Ելփին, Չիվա, Խաչիկ և Ռինդ) 2025 թվականի հունիսի 15-ից օգոստոսի 15-ը ներառյալ դպրոցահասակ երեխաների համար կազմակերպել ամառային ճամբարներ:

2. Առաջարկել Արենի համայնքի ղեկավարին՝

1) Արենի, Ագարակաձոր, Աղավնաձոր, Ելփին, Չիվա և Ռինդ բնակավայրում քաղաքացիաիրավական պայմանագրով ընդունել մեկ աշխատակից:

2) Աշխատավարձը սահմանել օրական 4500 ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:

3) Աշխատավարձը վճարել բնակավայրերի վարչական ղեկավարների կողմից ներկայացված աշխատած օրերի հաշվարկով:

4) Ճամբարների բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով հատկացնել համապատասխան գույք և պարագաներ:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 078-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Արենի համայնքի ավագանու 2025 թվականի աշնանային նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2025 թվականի սեպտեմբերի 9-ին ժամը 16:00-ին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 079-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 05-Ը ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ավագանու 05-ը հունիսի 2025 թվականի թիվ 7 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 05-ը հունիսի 2025 թվականի թիվ 7 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի բնակիչ Նազենի Մանուկյանի դիմումը քննարկելու և գույքահարկի արտոնություն տրամադրելու մասին:

3. Արենի համայնքի ավագանու 15.01.2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2025 թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

4. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

5. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող մանկապարտեզների շենքերը համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններին անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու մասին:

6. Արենի համայնքի ավագանու 30 նոյեմբերի 2022 թվականի թիվ 149-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

7. Արենի համայնքի և «ՅՈՒԼԻ-ԴԱԼԻ» ՍՊԸ-ի միջև կնքված 09 հունիսի 2020 թվականի 2,2174 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու և վարձավճար սահմանելու մասին:

8. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, նախկին վարչական շենքից 22.4 քմ մակերեսով տարածք անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու մասին:

9. Արենի համայնքի ավագանու մի շարք որոշումների մեջ փոփոխություններ կատարելու և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից օտարելուն համաձայնություն տալու մասին:

10. Արենի համայնքի ավագանու 24.12.2019թվականի թիվ 136 որոշման հավելված 1-ում, 28.11.2024թվականի թիվ 175-Ա որոշման հավելված 3-ում և 15.01.2025թվականի թիվ 006-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

11. Արենի համայնքում 2025թվականին կազմակերպվող փառատոնների և գյուղի տոների իրականացման աշխատանքների և գումարների հատկացման մասին:

12. Արենի համայնքի ավագանու 26.06.2024թվականի թիվ 091-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

13. Արենի համայնքում 2025թվականի հունիսի 15-ից օգոստոսի 15-ը ներառյալ ամառային ճամբարներ կազմակերպելու մասին:

14. Արենի համայնքի ավագանու 2025 թվականի աշնանային նստաշրջանի հերթական նիստի օր նշանակելու մասին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 066-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.01.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 002-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Արենի համայնքի ղեկավարի առաջարկությունը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 15-ը հունվարի 2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2025 թվականիտարեկան բյուջեում կատարվող հետևյալ փոփոխությունները և վերաբաշխումները՝

1. Կառավարման մարմնի պահպանում 01 բաժնիի 01 խմբի 01դասի 4239/ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածից պակասեցնել 100 000 ՀՀդրամ,4267/կենցաղային և հանրային սննդի նյութեր/ հոդվածից՝ 300 000 ՀՀդրամ:
Նշված գումարները ուղղել նույն ոլորտի՝

ա/ 4831/դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ/ հոդվածին 100 000 ՀՀդրամ,

բ/ 4215/ապահովագրական ծախսեր/ հոդվածին 300 000 ՀՀդրամ,

2. Արենի համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ 11 բաժնի 01 խմբի 02 դասի գործառնական դասակարգման 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից պակասեցնել 44 000 000 ՀՀդրամ և ուղղել՝

ա/ ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 4621/ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին/ հոդվածին 24 000 000 ՀՀ դրամ,

բ/ Արենիի այլ մշակութային միջոցառումներ 08 բաժնի 02 խմբի 04 դասի 4727/կրթական,մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ հոդվածին 5 000 000 ՀՀ դրամ,

գ/ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 01 բաժնի 03 խմբի 03 դասի 4819/նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ հոդվածին 15 000 000 ՀՀդրամ,

3. Արենի այլ ոչ հարկային եկամուտներ 28 բաժնի 50 խմբի 00 դասի եկամտատեսակում ավելացնել 319 200 ՀՀ դրամ և նշված գումարն ուղղել՝

նախադպրոցական ուսուցում 09 բաժնի 01 խմբի 01 դասի 4512 /Սուբսիդիաներ ֆինանսական պետական կազմակերպություններին/ հոդվածին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 068-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՆԱԶԵՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով հիմք ընդունելով ՀՀ ՆԳՆ ՀՈԳՎ Եղեգնաձորի բաժնի տեղեկանքը և Ն.Մանուկյանի դիմումը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի բնակչուհի նազենի Մանուկյանի՝ հանգուցյալ ամուսնու Աբրահամ Կավկազի Մանուկյանի անվամբ հաշվառված, սակայն 44-օրյա պատերազմի ժամանակ Արցախի Հանրապետությունում մնացած ԳԱԶ 3221 մակնիշի 35 CQ 105 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի նկատմամբ կիրառել արտոնություն և ազատել 17875 ՀՀ դրամ գույքահարկից և 3425 ՀՀ դրամ տույժից՝ ավտոմեքենան խոտանելու նպատակով՝ հաշվարկված 2022 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 067-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 685-րդ և 689-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արենի բնակավայրի 16-րդ փողոց 5 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը՝ անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Ջոն և Հասմիկ Մկրտիչյաններ Արենիի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

2. Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Ռինդ բնակավայրի 16-րդ փողոց 23 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը՝ անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արենի համայնքի Ռինդ բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

3. Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Աղավնաձոր բնակավայրի 1-ին փողոց 33 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը՝ անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

4. Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Ագարակաձոր բնակավայրի 1-ին փողոց 1-ին փակուղի 3 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը՝ անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի «Արևիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

5. Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արփի բնակավայրի 1-ին փողոց 3 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը՝ անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արենի համայնքի Արփի բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

2. Համայնքի ղեկավարին լիազորել օրենքով սահմանված կարգով և ժամկետում կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 070-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 149-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով Արենի համայնքի ավագանին որոշում է.

Արենի համայնքի ավագանու 30 նոյեմբերի 2022 թվականի «Արենի համայնքի ավագանու 26.10.2018 թվականի թիվ 9 որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի ղեկավարին կից Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին » թիվ 149-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ.

1. Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի մեջ կատարել փոփոխություն «3.1-7» թվերը, կետը և կետադրական նշանը փոխարինել «2.3-3» թվերով, կետով և կետադրական նշանով:

2. Որոշման 2-րդ կետը լրացնել 12-րդ ենթակետով և շարադրել հետևյալ կերպ «12) Օֆելյա Մկրտչյան-Զարման երեխաների զարգացման կենտրոնի սոցիալական աշխատող, հանձնաժողովի անդամ»

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 071-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի 1-ին փողոց 113/1 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-006-0350-0012, հողամասի չափը՝ 0.01295 հա, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ

արտադրական նշանակության հողերի կատեգորիա, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության) և
օրինականացված 46,38քմ արտադրական նպատակային նշանակության շինությունները՝ (պարիսպ՝ 0,4 քմ, 0.68 խմ.,պարիսպ 4 քմ,6.8 քմ , ծածկ 41.98 .) ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով օտարել կառուցապատող «Տրինիտի» ՍՊԸ-ին՝ ի դեմս տնօրեն Հովակիմ Սաղաթելյանի:

1) Հաստատել հողամասի և շինությունների համար հաշվարկված գումարները.

ա) ինքնակամ կառուցված 46,38 քմ արտադրական նշանակության շինությունների համար՝ 95 357 ՀՀ դրամ,

բ) 0.01295հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի արժեքը՝ 102 564 ՀՀ դրամ,

2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի 1-ին փողոց 113/2 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-006-0350-0011, հողամասի չափը՝ 0.01957 հա, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության) և
օրինականացված 73,97 քմ արտադրական նպատակային նշանակության շինությունները՝ (Սանհանգույց՝ 3.69 քմ, հարթակ 50.22 քմ, ծածկ 9.75,հարթակ 5.52, ծածկ 4.75) ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով օտարել կառուցապատող «Տրինիտի» ՍՊԸ-ին՝ ի դեմս տնօրեն Հովակիմ Սաղաթելյանի:

1) Հաստատել հողամասի և շինությունների համար հաշվարկված գումարները.

ա) Ինքնակամ կառուցված 73,97 քմ արտադրական նշանակության շինությունների համար՝ 152 082 ՀՀ դրամ,

բ) 0.01957հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նշանակության հողամասի արժեքը՝ 154 995 ՀՀ դրամ,

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 069-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ «ՅՈՒԼԻ ԴԱԼԻ»ՍՊԸ-Ի ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ 09 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ 2.2174 ՀԱ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ,ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հիմք ընդունելով ՀՀ Տարածքային կառավարման և Ենթակառուցվածքների նախարարության և «ՅՈՒԼԻ-ԴԱԼԻ» ՍՊԸ-ի միջև 13.09.2023 թվականին կնքված օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-715 պայմանագիրը և «ՅՈՒԼԻ-ԴԱԼԻ» ՍՊԸ-ի տնօրեն Լիլիթ Փաշինյանի 20.05.2025 թվականի գրությունը՝ պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին.
Արենի համայնքի ավագանին որոշում է.

1. Արենի համայնքի և «ՅՈՒԼԻ-ԴԱԼԻ» ՍՊԸ-ի միջև կնքված 09 հունիսի 2020 թվականի ՀՀ Վայոց Ձորի մարզի Արենիի համայնքի Խաչիկ բնակավայրի Կվարցիտի 1-ին թաղամաս 2 հասցեում գտնվող 2,2174 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի (ծածկագիրը՝ 10-025-0106-0010, գործառնական նշանակությունը՝ ընդերքի օգտագործման) վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 14.09.2033 թվականը:

2. Տարեկան վարձավճարը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 6 000 000 ՀՀ դրամ և յուրաքանչյուր արդյունահանված օգտակար հանածոյի 1 տոննայի հաշվարկով 1000 ՀՀ դրամ:

3. Տարեկան վարձավճարի 5 000 000 ՀՀ դրամ գումարը վճարվում է հավասար պարբերականությամբ՝ ըստ ամիսների: Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը վճարվում է մինչև հաջորդող ամսվա 15-ը:

4. Արդյունահանված օգտակար հանածոների համար վճարումները կատարվում են մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 20-ը ներառյալ՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից ստացված հաշվետվությունների հիման վրա:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 072-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ 22.4 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 685-րդ և 689-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Հաղորդակցության զարգացման միջազգային ինստիտուտ» հումանիտար հիմնադրամի տնօրեն Արման Ղուկասյանի 30.05.2025թ. գրությունը

Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արենի բնակավայրի 6-րդ փողոց 2 հասցեում գտնվող նախկին վարչական շենքի 2-րդ հարկից 22.4 քմ տարածքը՝ 3 (երեք) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Հաղորդակցության զարգացման միջազգային ինստիտուտ» հումանիտար հիմնադրամին՝ անվճար հիմունքներով ռուսաց լեզվի իմացության զարգացման կրթական ծրագիր իրականացնելու նպատակով:

2. Համայնքի ղեկավարին լիազորել օրենքով սահմանված կարգով և ժամկետում կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 073-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ և ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի>> մասին օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Դադարեցնել Արենի համայնքի ավագանու.

1) 11.02.2025թվականի թիվ 017-Ա որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ, 7-րդ և 8-րդ մասերի գործողությունը,

2) 24.12.2024թվականի թիվ 204-Ա որոշման 1-ին մասի գործողությունը,

3) 08.11.2024թվականի թիվ 158-Ա որոշման 2-րդ մասի գործողությունը,

4) 10.09.2024թվականի թիվ 132-Ա որոշման 3-րդ, 6-րդ և 8-րդ մասերի գործողությունը,

5) 25.07.2024թվականի թիվ 110-Ա որոշման 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերի գործողությունը,

6) 06.06.2024թվականի թիվ 074-Ա որոշման 6-րդ և 23-րդ մասերի գործողությունը,

7) 12.09.2023թվականի թիվ 105-Ա որոշման 1-ին մասի գործողությունը,

8) 30.04.2021թվականի թիվ 056-Ա որոշման 3.3 կետի գործողությունը,

9) 11.10.2024թվականի թիվ 150-Ա որոշման 3-րդ մասի գործողությունը,

2. Տալ համաձայնություն սույն որոշման հավելված 1-ով ներկայացված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը լիցենզավորված կազմակերպության կողմից գնահատելու և աճուրդ-վաճառքով օտարելուն:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 074-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24.12.2019ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 136 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 1-ՈՒՄ, 28.11.2024ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 175-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 3-ՈՒՄ ԵՎ 15.01.2025ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 006-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՀԵՐ ԱՍԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի>> մասին օրենքի 33-րդ հոդվածի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Արենի համայնքի ավագանու 24.12.2019թվականի << <<Արենի>> ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով փոխանցված տեխնիկայով մատուցվող ծառայությունների սակագները հաստատելու մասին>> թիվ 136 որոշման հավելված 1-ում կատարել փոփոխություններ.

Հավելվածի սյունյակի 2-րդ տողի լրացուցիչ տվյալներ բաժնում <<2600>> թիվը փոխարինել <<4000>> թվով:

2. Արենի համայնքի ավագանու 28.11.2024թվականի թիվ 175-Ա որոշման 3-րդ հավելվածում կատարել լրացումներ և փոփոխություններ.

1) աղյուսակում ավելացնել նոր 18-րդ կետ .

18	Ֆիզ. ղեկ	0,25	1	125 000	31 250

2) Ընդամենը տողը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ.

Ընդամենը	24,85	30	2 302 000	3 173 250

3. Արենի համայնքի ավագանու 15.01.2025թվականի <<Արենի համայնքի ավագանու 28.11.2024թվականի թիվ 176-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու և բնակավայրերի վարչական ղեկավարների գործուղման ծախսերի փոխհատուցման գումարի չափը հաստատելու մասին>> թիվ 006-Ա որոշման մեջ կատարել լրացումներ. որոշման վերնագրում և 2-րդ մասի մեջ <<վարչական ղեկավարների>> բառերից հետո ավելացնել <<և Աղավնաձոր բնակավայրի Մուրադ Սարգսյանի անվան արվեստի դպրոցի տնօրենին>> բառերը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 075-Ա)*

Ավագանու անդամներ

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՄՀԵՐ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՋԱՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՉԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԻՐԶՈՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Գևորգ Սիմոնյան ը_____